

հոգ չէ թէ անոնք սպանդանոցներ եղած ըլլան, բաւական է որ «մասնաւոր» անունը կը կրեն:

Ինչ թերութիւններ ալ ներկայացնէ ազգային վարժարանը, անիկայ միջոց նախամեծար է ինծի համար, որովհետեւ հոն ազգին բոլոր դասակարգի տղաները մէկտեղ հաւաքուած այլազան ամբողջութիւն մը կը ներկայացնեն, հետաքրքիր իր առանձնատկութեան մէջ. շահեկան իր ներկայացուցած ուսումնասիրելի կողմերով: Բուն ժողովուրդը կը պատկերանայ հոն՝ ապագայ ժողովուրդը, որ քեզի յանձնած են կսկելու, զտելու, ուղղելու, վարելու համար: Հոն պիտի հանդիպիս յանդուզն նկարագիրներու, ըմբոստ, անզուսպ հոգիներու, տկարին պաշտպան կանգնող, անիրաւութեան դէմ մաքառող, անհաւասարութեան դէմ բողոքող խումբերու, պիտի տեսնես մանրանկարը ամբողջին ընազդական վեհանձնութեան, որ լաւ առաջնորդութեամբ, ազնուացնելով, օր մը թերեւս ամենէն մեծ յեղաշրջումը պիտի առաջ բերէ: Մասնաւոր վարժարաններու հեղձուցիչ մթնոլորտը, բարքերու շինծու աշխարհը գոյութիւն չունի հոս, որ իբր առերևոյթ նրբութեան տակ, կեղծիք ու արուեստանութիւն կը բուրէ շարունակ: Հոս ամեն ինչ անկեղծ է, ամէն ինչ բնական և զուտ ազգային, զերծ օտարամուտ բարքերէ, որոնք ինքնատիպ հոգիներու ապագայ քայքայումը առաջ պիտի բերեն: Ազգային վարժարանները ազգին հոգին կը պատկերացնեն, և հետեւաբար պէտք է քննարկել ամբողջ ազգին զաւակներէն:

ՇԱՀԱՊ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒՍԵՐ

(Շար. նախորդ քիւիկն եւ վերջ)

Վարը, զառիւսայրին վրայ ստանձանաբար գիւղաքաղաքը կը տարածէր իր ընդարձակ այգիներով, դաշտերով, որոնք կերթային հեռաւոր լեռներու ստորոտը անհետանալ անորոշ, տարտամ գիծերու փոխուելով: Ինչոք լուծիւն մը կը տիրէր բնութեան մէջ, առերևոյթ հոնգարտութիւն մը, որ շատ անգամ փոթորիկի մը նախազուշակն էր:

Յանկարծ հեռուն, նեղ ճանապարհին վրայ փոշիի փոքրիկ ամպ մը բարձրացաւ, որ սրագորէն կը մօտենար:

Չարուհի և գիւղացիները այն կողմ դարձան ձիւուր մը հովի արա-

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՇ, 5 Յուլիս

Այնիւ ընկեր,

Կը ստանամ նամակներդ որոնցմով կը յանդիմանես շիս հայրենիքի ներկայ վիճակի մասին բան չի գրելուս համար, սակայն առանց մտածելու թէ՛ մենք ի՞նչ հանգամանքներու մէջ կը գտնուինք: Պէտք է գիտնաւ որ մեր ամէն քայլափոխը մահ կամ վտանգ կ'սպառնայ մեզ. եթէ երբեք ու է գործով մը ստիպուինք Մուշ երթալ, հոն անմիջապէս լրտեսներով կը շրջապատուինք, հետագորգի բնութիւնը նպատակաւ գացած ենք, և ի՞նչ գործով կը զբաղինք: Անկարելի է մեզ փոստին յանձնել սրտասահմանի հասցէով գրուած ու է նամակ, վտանգ ենք որ ամէնքն ալ կը բացուին, և եթէ կասկածելի բան մը գտնեն, այն ատեն մեզ համար պատրաստ են բանտերու ստորերկրեայ նկուղները, խուզարկութիւններ և տեսակ տեսակ անլուր չարչարանքներ: Ահա չի գրելուս պատճառը ինչ որ արդէն ձեզ ծանօթ ըլլալու էր:

4-5 տարիէ ի վեր Մշոյ աշխարհը դժոխային դժուարութիւններու ննթակայ եղած է, կառավարութիւնը ջանք չի խնայեր օր առաջ մեր ջնջումը փութացնելու: Ընտանեկան ոչ մէկ սրբութիւն չէ մնացած և ես ասոնք նկարագրելու համար բառ չեմ կարող գտնել:

Պալաքցի Պըշար աղայի որդի Խալիլի սպանումը, յետոյ Մուկունք գիւղի մէջ հաստատուող Մշեցի Գոտանի Շէրիֆի աղայի սպանուիլը մեծ իրարանցում յառաջ բերած է թուրքերու և քիւրտերու մէջ: Պալաքցի աշիրէթ-

ները այս բանէն գոզուելով, ամիսուկէս առաջ խումբեր կազմած՝ յարձակեցան Սեւ լեռան ստորոտը գտնուող հայ գիւղերուն վրայ, կողոպտեցին, առեւանգեցին, մարդերու կորուստ ալ տուին:

Մուկունք գիւղի մէջ 8 հոգի, Բերդակ գիւղէն 3, Հայիկ գիւղէն 11 հոգի, Մառնիկ գիւղէն 2, Ալվառինք գիւղէն 3, Խազ գիւղէն 3, Եմլակէն 1. ընդամենը 30 հոգի: Եւ այս դեռ բաւական չէ, կառավարութիւնն ալ անոնց պակասը կը լրացնէ, խուզարկութիւններ ընելով ու խեղճ մարդիկը ձերբակալելով՝ Մշոյ կեդրոնական բանտերը կառաջնորդէ անոնցմէ հայ յեղափոխականները պահանջելով:

Սիրելի ընկեր այս նամակ կարդալով կը յուսամ թէ պիտի կրնաս աչքիդ առջեւ պատկերացնել Սեր դժբաղդ կացութիւնը, ու հոն պիտի տեսնես հայ եղբայրներդ որոնք ամէն օր իրենց օրհասը կ'ողբան, երանի կարդալով մեռածներուն և ձեզի պէս օտար աշխարհ ապրող հայ եղբայրներուն:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂ ՌԻԹԻԿԸ

(Շար. նախ. քիւիկն եւ վերջ)

Նոքա ուսերէն են խօսում. ժողովի պաշտօնական և ոչ պաշտօնական լեզուն ուսերէնն է, ի՞նչու: Ետտ հասարակ պատճառով, որովհետեւ ժողովականների սպաննիչ մեծամասնութիւնը հայերէն մի խօսք անգամ չի գիտէ, իսկ փոքրամասնութիւնը լեզուին չի տիրում: Լիարդար զայրոյթով կ'ամենում էք գոնէ մի անգամ երեսներին շարտել «անամթեւ և անիղճ» բառերը: Բայց գլխի գալով որ նոքա չը պիտի քեզ հասկնան, դուրս էք գալիս այդ ժողովից ամենածանր տպաւորութեան

թիւններու դէմ մաքառելով, այս սեղ է վերջապէս, անհունապէս երջանիկ, քեզ և մայրենի հողը, ջուրը տեսնելուն:

— Մուրա՛ւ—բաւ Չարուհի, աչքերը երիտասարդին սեւ, կրակոտ աչքերուն յառելով—եկա՛ր, զոհեցիր ծնողդ, ապագայ և գուցէ կեանքդ, չեմ գիտեր թէ լա՛ւ բրիւր, բայց բարի եկա՛ր...

Ու զայն ոտուն առաջնորդեց: Մուրատի առջեւ նոր աշխարհ մը բացուած էր, իր յանգուզն ձեռներեց ոգին այնտեղ անհուն պաշար պիտի գտնէր, Չարուհիի սէրը զօրավիգ ունենալով:

Չարուհի և Մուրատ մէկ մէկ կայծեր էին, որոնք կը հրդեհէին այնտեղ ուր կը յայտնուէին:

Ծնող գարեբու երկար ժամանակամիջոցի մէջ տանջուած, ստրկութեան վարժուած ժողովուրդը այնպէս կը լսէր անոնց բերնին թոած ամէն մէկ բառ, որ մէյմէկ վառ ա-

տակ:

Բայց չէ որ այդ ընկերութիւններն ունին եւ գրագարաններ: Այցելենք մի անգամ էլ այնտեղ, գուցէ մի միութարական բան գտնենք գրագարանում: Գրագարանայտի գիրք բաշխման մատենը մեզ շատ բան կարող է ցոյց տալ: Չոր ու ցամաք թւերը երբեմն աւելի մեծ թովանդակութիւն են ունենում քան երկար ու բարակ ճոռմարանութիւնները: Ահա ձեր առաջ երկու կամ երեք մեծ պահարաններում գրագարանի փոսակազմ գրքերը որոնք մեծ խնամքով շարուած են: Այս սեղ դուք կը գտնէք Հայոց նշանաւոր գրողների բոլոր գործերը, այստեղ են եւ ուսաց յայտնի գրողների գրուածքները. վերջում էք գրագարանայտի արձանագրութեան տետրը եւ որպիսի գրամանր: Հագիւթէ 5-10 հոգի հետաքրքրուում են գրքերով. ուսերէն շատ քիչ են կարդում, այն էլ միայն ամսագրերը, իսկ հայերէն, երբ մէկն ու մէկը քաջութիւն ունեցաւ գիրք վերցնելու, պէտք է սպասել, որ այդ գիրքը կամ պիտի կորչի, որ ազատուի ընթերցասէր պարոնի ձեռքից, կամ թէ գրագարանայտը պատահմամբ մի անգամ պէտք է հիւր գնայ ընկերի մօտ եւ գերութիւնը գառակ գրագարանի սեպակահանութիւնը: Տխուր պատկերը որ ստացել էիք գրականական ընդհանուր ժողովները այցելման ժամանակ, աւելի մթադնուած է եւ դուք ենթակուում էք դառը մտածողութիւնների ազդեցութեան:

Ի՞նչ, միթո՞ւ սոքա են մեր ազգի կրթեալ մարդ, եւ սոցա՞ վրա պիտի յենի մեր թշուառ ժողովուրդը ազգն ու ազգութիւնը չը կորսնելու համար: Սոքա՞ են այն մեծ վերաբուծները որ մեր բաղձաթիւ վէրքերին սպեղսնի պիտի գնեն: Գիտութեամբ օժտուած, բարձր գաղափարներով տրոգրուած վսեմ և վե՛ճգտունները կարաստները սոքա՞ են: Այս է այն երիտասարդութիւնը, որ մեր ազգային ինքնձանաչութիւնը և նրա ազգային հպարտութիւնը պիտի բարձրացնէ: Դուք հրաժարուած էք հստատալ որ դոքա հայեր են, Հայերէն չեն կարդում, հայերէն չեն խօսում, հայի վիճակով չեն հետաքրքրուում, էլ ս'ըր մնաց

ծուխի նման կիչնային զիրենք լըսողներուն սրտին վրայ:

Ետտ մը կը մեծնար, կը կազմուէր, որու հոգին էին Չարուհի և Մուրատ:

Ինքնագիտակցութիւնը խուլ կերպով կը տարածուէր ժողովրդին խոշոր խաւերուն մէջ, գոռ փոթորիկը նախազուշակող թեթեւ յուզումներ յառաջ բերելով...

Հրացաններու ճարձատիւնին հետ վայրենի աղաղակներ օղը թնոյացուցին...

Գիւղը պաշարուած էր:

Մուրատ լուռ, խրճիթին մէկ անկիւնը քաշուած, արագորէն իր հրացանը կը պատրաստէր տխուր յայտուածք մը ձգելով Չարուհիի վրայ, որ խրճիթին փոքրիկ պատուհանէն հեռուն կը դիտէր, ջգձգաբար իր փոքրիկ հրացանին փոքր սեղմելով, Չարուհի կը թաքնուէր կը մօտենային,

զոցա հայու թիւըն : Ակամայ յիշում եմ Ս. Աբովեանի այս սողերը . «Ձեզ եմ ասում , ձեզ հայ ազգի երիտա- սարդներ , ձեր հոգուն մատաղ , ձեր անունին զուրբան , տասը լեզու սովորեցէք , ձեր լեզուն , ձեր հատար ամուր պահեցէք» :

Շատ ջուր հոսեց այն օրից , երբ խանդավառ մեծ հայրենասէրը կտակեց մեզ այս խօսքերը , բայց մենք անարժան ժառանգներս չարդարուցրինք նորա յոյսը , յոյսը այն մարդուն , որ այնպէս զուրբան էր լինում մեր «արեւ»ին :

Մենք ոչ թէ ամուր չենք պահում այդ լեզուն , այլ առանձին հարստութեամբ մի կողմն ենք նետում նրան , ինչպէս մի աւելորդ բնութայն մի թէ այս տխուր երեւոյթը նկատուած է միայն Ռուսաստանի հայ ուսանողութեան մէջ , մի թէ և արտաքին հայ ուսանողութեանը : զխաւորապէս նոքա , որոնք Ռուսաստանից են , շատ են բարձր իրենց հայրենակիցներին : Մենք սրտի կակիւծով ենք յիշում թէ ինչպէս Լեհաստանի հայ գաղութը անհետացաւ հայութեան ոչ մի հետք չը թողնելով , Լոսանալով սակայն , որ ինքնին շատ էլ հեռու չենք նոյն վիճակին ենթարկուելու :

Մեզանից իւրաքանչիւրը մեծ աշխոյժով աշխատում է մի քանի եւրոպական լեզուներ սովորելու , բայց ոչ մէկը նեղութիւն չի կրում մի արձակուրդ գտնել նուրբ իր մայրենի լեզուն սովորելու համար : Մի թէ ևս ամօթաբեր երեւոյթ չէ՞ Չուրիք ազգային հարստութիւն , ահա մեր գլխաւոր ցաւը : Հրէականութիւնից շատ հեռու չենք , ահա մեզ սպաննացող վտանգը :

Նամակս վերջանալու վրա աւելորդ չեմ համարում աւելացնել որ վերջերս մի տեսակ ուրախալի երեւոյթ է նկատուում թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Ռուսաստանի հայ ուսանողութեան կենտրոնում : Այդ նոր արթնացած խոզի խայթն է որ ստիպում է լուրջ կերպով նայել լեզուի հարցին եւ ամէն կերպ աշխատում են այդ անպատու արքայ թերութիւնը լրացնելու : Սակայն զոցա թիւր առ այժմ այնքան քիչ է , որ բացառութիւնների շարքը կարելի է դասել :

Ահա այս է Ռուսաստանի հայ ուսանողութեան պատկերը : Որքան են

սոքա պատրաստ եւ ընդունակ Եւրոպական Հ. Ո. Մ. ծրագիրը ընդունելու , ինքնեք զատեցէք :

ՃԱՐՏԱՐԵՑԻ

ՊԼԵՍԵԼՈ՞ շԱՅ ԴԵՐ ԽՈՒՍԲԸ

Այսօրու արդար ՊԼԵՍԵԼՈ՞ գերասանական խումբն է որ , ամառնային աս տաք օրերուն մէջ քաղաքս մնացող զուարճասէրներուն կամ թատերասէրներուն միակ միջոցը կուտայ իր ներկայացումներով անտանելի տաք դիշերները սահեցնելու : Աւերք ամիսներէ ետքը , աս վերջին շաբաթն է որ պիտի ունենանք զիրենք , քանի որ օգոստոս 1ին կը պատրաստուին այցելել Ռուսչուգ :

Եթէ մինչեւ հիմա չը գրուեցաւ իրենց մասին , պատճառը ներկայացուած խաղերուն մէջ «տոմարներու պակասն էր , ու աս անշուշտ խումբին կամքէն բուրովին անկախ» ունենալու հասարակութեան տրամադրութեան հետեւանքն էր , որ , աւելի կաստրոյի կատակախաղերէն քան թէ բարոյալից տոմարներն :

Աս նկատողութիւնը ընելով մէկտեղ , պարտք կը զգանք խոստովանելու որ , «Վէսէլօ»ին ներկայացուցած խաղերը առ հասարակ իրենց տեսակին մէջ միշտ յաջող կանցնին , գոհ ձգելով ունենող իրենքը :

Իմ կողմէ ողջ իմ մը թող ըլլայ ներկայ տղերքը , որուն տուն տուաւ ամսոյս 19ին հինգշաբթի գիշեր ներկայացուած «Նարբոյի» գողեր» անուն խաղը , որ հակառակ իր ոչ այնքան լաւ հիւսուածքին ու նիւթին , գերասաններու յաջողութեան շնորհիւ ունենալու արժանի դարձաւ : Հարկ չիկայ երկար ծանրանա-

լու գերակատարներուն վրայ , որոնցմէ մէկ քանին՝ Պ. Պապանան , Պէնիւան , Երամեան և Եաքարեան՝ բաւական լաւ անուն մը չին : Իւրեւ վարժ գերասաններ և իւրենց ճիւղերուն մարդիկը : Այս ներկայացմամբ մէջ ալ Պ. Պապանեան իր տուամաթիքի ամբողջ կարողութիւնը թափեց «Ճաքոմօ»ի գերին մէջ , ուր բարկութեան և կատաղութեան ամենաբնական արտայայտութիւն մը ցոյց տուաւ : Խօսքը ընեց Պ. Պէնիւանին , որուն անունը լուրջ արդէն կակաի ծիծաղիլ , շնորհիւ անոր սրամիտ հեգնողի տաղանդին որ միացած է խնդացնելու ճարպկութեանը : Պ. Պէնիւան աս ներկայացման մէջ «Վէնէրալ»ին պաշտ ծառային դերը կատարեց իրեն սովորական յաջողութիւնովը : Պ. Երամեան , որ ծերերու և յիմարներու գերերուն մէջ ամենէն աւելի լաւ կը յաջողի և մեծ ընդունակութիւն ցոյց կուտայ , կատարեց խեղանդամ ծեր «Վենետիկ»ին գերը շատ վարժ : Չեմ կրնար չի ծանրանալ Պ. Եաքարեանի վրայ , որ գեռ առաջին անգամ կը տեսնեմ , և որուն կատարած գերը առաջին անգամով արդէն շատ լաւ տպաւորութիւն թողուցած է ինձի հետ զինքը չը ճանչցող շատերու վրայ : Իեմական լաւ ձայն մը , կիրթ և շարժաւոր շարժումներ՝ Պ. Եաքարեանը կօծտեն գերասանի մը անհրաժեշտ պէտքերով , ու ան եկած է իսկապէս կարեւոր պակաս մը լրացնել խումբին մէջ : Տիկին Մարի , Պ. Թանաշ և Քիւլիւքեան ալ յաջող էին իրենց գերերուն մէջ :

Եթէ կայ ցաւալի կէս մը , ան ալ մանաւանդ Տիկին Յայրենանի բացակայութիւնն է խումբին մէջ , քանի որ Պ. Եաքարեան արդէն գոցած է Պ. Յակոբեանի պակասը : Բայց Տիկին Յակոբեանի տեղը

բաց մնացած է , և զգալի կերպով բաց Տիկին Յակոբեան , որ իր ընդունակութիւնով , բնական անուշ և յուզիչ ձայնով , իր յարմարութիւններով ու ձիրքերով եթէ մէկ կողմէ գերասանական ասպարէզին մէջ մնալով փայլուն ապագայ կը խոստանար և լաւ յոյսեր կը ներշնչէր , միւս կողմէ արդէն խումբին փայլերէն մէկն էր : Կնոջ լուրջ գեր կատարող չիկայ խումբին մէջ : Տիկին Մարի միշտ էր իկ մարդու գեր կատարելուն համար խորթացած է կարծես կնոջ գերին մէջ : Մենք կը փափաքինք որ , փոխանակ օր աուր խումբին կարեւոր անգամները պակասու նորեր աւելնան : Որքան ուրախացուց մեզ Պ. Եաքարեանի մասնակցութիւնը , այնքան աւելի տխրեցուց Տիկին Յակոբեանի բացակայութիւնը : Ի սրտէ կը ցանկանք որ յառաջիկայ սեզոնին «Վէսէլօ» խմբին մէջ Տիկ. Յակոբեան ալ տեսնանք որով աւելի խտացած պիտի ըլլայ խումբին թիւը :

«Վէսէլօ»ին գէթ միլիպէի հայ երիտասարդութիւնը բաւական բան կը պարտի աս տարուան մէջ , իր հագուստները առանց վարձքի թատերասէրներու տրամադրութեան տակ դնելէ զատ , ինչպէս առաջի , այնպէս ալ աս անգամուան Շէխ—ձէլալէտտինին ներկայացման ատեն ալ բարոյական օժանդակութիւն մը ցոյց տուաւ մէկ-երկու անգամ զրկելով Պ. Պապանանը , որ ամէն ջանք թափեց ներկայացման յաջողութեան համար :

Իսկ թէ ինչ տեսակ ընդունելութիւն մը և նիւթական օժանդակութեան ինչ չափ մը կը պարտի Ռուսչուգի հայ հասարակութիւնը «Վէսէլօ»ին , ան ալ իրեն կը ձգեմ :

Հրանդ—Փիտայր
Միլիպէ 23 Յուլիս

վայրենի խումբը գիւղացիի մը անաշխոյժութեամբ խրճիթին կը մօտենար արագօրէն :

— Օ՛ , մոմոաց ակոսները կրճատելով Մուրատ , տե՛ս , Չարուհի , ահա այն մարդը , որու կեանքը փրկեցիր , եւ որը այսօր իբր վարձատրութիւն մեզ կը մատնէ :

Չարուհի անխօս , գունատ , իր փոքրիկ հրացանին փողը պատուհանին մէկ ձեղքուածքէն դուրս ուղղեց արշաւող խումբին ուղղութեամբ :

Հրացանը որոտաց . . . եւ մասնիչը փոշիներուն մէջ դաւայեցաւ . . . քուրդ հրոսակներուն սոքերուն կոխան դառնալով :

Թաքստոցը արդէն յայտնուած էր : — Արժանի էր . . . — մրմնջեց Մուրատ — իսկ կարգը մերն է : պիտի մեռնինք , Չարուհի , արիօք չե՞ս սփստանար ծաղիկ հասակդ , սէրդ . . .

— Մի՛ — բնդհասակ Չարուհի — մի խօսիր այդպէս , մեռնիլ քու քովդ քեզ հետ , այդ այնպիսի երջանկու-

թիւն է ինձի համար զոր եւ ոչ իսկ կերպէի . . . չեմ ցաւիր մեռնելու . . . պարտքը զո՛ւր կը պահանջէ : սերմը հողին յանձնեցինք , պտուղները պիտի հասնին մեր տաճ կարմիր արիւնով ոտուելով , մեռնինք Մուրատ , մեռնինք ժպտելով . . . Մուրատի շրթունքները Չարուհիի շրթունքներուն հանդիպեցան , եւ յաւիտենական բաժանման վերջին կարօտակէզ համբոյրը զրոյմեցին այնտեղ :

Քանի մը գնդակներ եկան խրճիթի պատուհաններուն ապակիները փչրել :

Իւրաքանչիւրը մէյմէկ պատուհանի անկիւն քաշուեցան և հրացանները սկսան որոտալ . . .

Դառն ժպտաւ մը կը նկատուէր Մուրատի շրթանց վրայ ամէն անգամ , երբ խրճիթին դիտուող կուսողը կատարի բազմութեան մէջէն իր գընդակը մէկը կը սապակէր թաւալազլոր :

Յանկարծ մեզմ հանդիւն մը լսեց .

սենական միւս անկիւնը նայեցաւ . . . հոն , պատուհանին առջև՝ միացող հրացանը ձեռքին՝ Չարուհի տարածուած էր անկեղծաւ , խոսու հողին վրայ , գնդակէ մը ճակատը փչրուած . . .

Մուրատ մոյճգին վայրենի աղաղակ մը հանեց որ բոպէպէս խաւցուց հրացաններուն ճայթիւնը , դէպի անոր խոցացաւ , ծուրդ դրաւ , եւ Չարուհիի արեւնաթաթախ և երարձակ գլուխը իր ծունդին վրայ տաւ . . .

— Սպաննեցին քեզ—մրմնջեց անթարթ դիտելով զայն չոր աչքերով որոնք կայծակներ կարճակէին — ինչ առաջ մեռա՛ր . ես ալ չեմ ուշանար քեզ հասնիլ . . . հանգչէ՛ խաղաղութեամբ , պաշտելի՛ աղջիկ . . .

Աւ իր գողգողացող շրթունքները անյազօրէն համարեցին Չարուհիի տաք , արիւնլուայ ձակաւը . . .

Կամաց մը վար դրաւ աղջկան գըլուխը , սափ ելաւ , մոլեգին խնայ-

նոր նայուածք մը պատուցեց իր շուրջը , հրացանը մէկ կողմն նետեց ատրճանակները յափուակեց սեղանին վրայէն , ու դուռը բանալով՝ ծուրսի ե հրացաններու փայլատակուածին մէջէն սրացող առեւծի մը պէս դուրս խոյացաւ . . .

Բոպէ մը ապշութիւն տիրեց իր շուրջը . . .

Ամբոխը զարհուրելի երեւոյթ մը տեսնողի նման ետեւ քաշուեցաւ սոսկուծով գոցելով . . .

— Տիտայրն . . . Տիտայրն . . . Իսկ Մուրատի ձեռքի ատրճանակները անդադար մոլեգին կը պայթէին կեանքեր խլելով այդ վայրենի , աւաղակային ամբոխին մէջէն . . .

Յանկարծ գողգողաց ու մէկ ծունդի վրայ ինկաւ , վերջին գնդակը գողգողուն ձեռքով ուղղելով իրեն մօտեցող զփոխային ամբոխին խիտ շարքերուն մէջ :

Թշնամի գնդակ մը վերջ տուած էր այդ հերոս կեանքին :

Վ.Ա.Ջէ

Պարու

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ստացանք կիպրոսի Որբանոցին 1900-01 շրջանի տեղեկագիրը, ուրիշ կը հասկցուի որ Կըր թարան-Որբանոցին մէջ 37 աշակերտ կը յաճախին, 4 դասարաններու բաժնուած: Այս շրջանին մէջ որբանոցը 355 անգլ. ոսկի ծախսած է: Կրթարանն մէջ կաւանդուին ազգ. նախակրթարանի գրեթէ բոլոր նիւթերը, հայերէն, թուրքերէն, անգլիերէն ֆրանսերէն լեզուներով, այս վերջինը կամաւոր:

Պուրկազէն մեզի զրկած են Միութեան հրաւեր մըն ալ մասնաւորապէս նոյն պարունակութեամբ ինչ որ էին Վառնայի և Ռուսչուգի հրաւերները: Հոս ալ կը տեսնուի միեւնոյն սնամէջ յաւակնութիւնը ուժ գոյացնելու և այդ բարոյական ու նիւթական ոյժի միջոցաւ կուսակցութիւնները միութեան ստիպելու, որոնց վստահելութեան մասին միութեան հրաւերողները չեն մոռցած դարձեալ իրենց կասկածները յայտնել: Նորէն կը կրկնենք, «անվստահելի» մարմինները իրարու միանալով վստահելի չեն դառնար: Գոնէ չէ՞ք խորհիր որ այդ անվստահելիները իրար միացնելով աւելի զօրեղ անվստահելի մը առաջ պիտի գայ, որ ձեր գլխուն փորձանք պիտի ըլլայ թերեւս: Պէտք է հասկնալ որ այդ «միութիւններ» ներքին ինչչէն են, նախ թող իրենք կուսակցութիւններուն միանան, որպէսզի յետոյ կուսակցութիւններն ալ իրարու միանան:

Ռուսական լրագիրները կը յայտնեն թէ յառաջիկայ աշնան յատուկ լանձնաժողով մը պիտի զբաղի հայոց բարեգործական հիմնարկութեանց վերաքննութեան խնդրով, Թանձնաժողովին նիստերուն պիտի հրաւիրուի նաև կաթողիկոսին կողմէ ներկայացուցիչ մը:

«Մշակ» կիմացնէ թէ, մասերս լոյս պիտի տեսնէ յայտնի ռուս բանաստեղծ Լրմեօնթովի «Գեւ» բանաստեղծութեան երրորդ հայերէն թարգմանութիւնը: Թարգմանիչն է պարսկահայ մը, Թովսէփ Միրզայեան, որ այդ գրուածքի գեղեցկութիւնը ըմբռնելու համար յատկապէս ուռտերէն սորված է, և որ արդէն ծանօթ է գրականութեան մէջ Վալթէր Սքոզի «Լորտերու կղզին» գործին թարգմանութիւնով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Ռ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մեզի կը հաղորդեն թէ խումբ մը հայեր Պարսկական սահմանագլուխէն անցնելով Պուլանդի

սահմանները մտեր և մինչև Բերդալ յառաջացեր են, երբ արդէն Բերդալի տխուր դէպքը տեղի ունեցած էր: Ասոնց մէկ մասը նոյն գաւառին կեդրոն կոփ գիւղին կոփայ վանքը գիմած և վանահայր Սիմէոն վարդապետէն հաց և պաշար խնդրած ըլլալով ընկերներուն համար, յիշեալ գաւառան վարդապետը իբր թէ խնդրածնին տալու համար զանոնք կը սպասցնէ և միւս կողմէ լուր կը զրկէ տեղւոյն թուրք իշխանութեան, որ բազմաթիւ զօրքերով կուգայ վանքը պաշարել: Հայ կարիճները վանքին ամրութեանց ետեւէն երկար կը գիմագրեն թուրք զօրքերուն, բաւական թուով անոնցմէ կը սպաննեն, իսկ մնացածները, կարծելով որ թշնամին բազմաթիւ է, կը ձգեն ու կը փախին:

Այն ատեն ապաստանեալները վանահօր քով կերթան, զայն կտոր կտոր կընեն, և լեռներուն մէջ պահուած իրենց ջնկերները գտնելով, կրկին պարսկական հողը կանցնին:

Հին Սերպիաէն գաղթող փախստականներուն թիւը արդէն հազարը անցած է. ասոնք թըրքահայտակ բայց քրիստոնեայ սերպեր են, որոնք կը թողուն իրենց հայրենիքը թուրքալպանացիներէն կրած շարչարանքներուն չի կրնալով հանդուրժել:

Միախոտի բեժին և Հանրային պարտուց վարչութիւնը թուրք կառավարութեան 500,000 օսմ. ոսկիի փոխառութիւն մը ընել յանձն առած են:

Սօփիայի ռուս ընդհ. հիւպատոսը, որ Միթրովիա զրկուած էր քննելու համար թուրք իշխանութեանց Մակեդոնիոյ մէջ ունեցած ընթացքը, տեղեկագրով մը շատ ցաւալի իրողութիւններ հաղորդած է, որոնք կը յիշեցնեն երբեմն Պուլկարիոյ մէջ պատահածները:

Քանի մը օրէ ի վեր թուրքերի և Անգլիոյ միջև յարաբերութիւններ շատ ձգտուած են հետեւեալ միջադէպին առթիւ. թուրքերը Ապտէի մօտ Արարներու յանձնուած հողի մը վրայ, որ Անգլիոյ պաշտպանութեան տակ կը գտնուի, կուզեն ամրութիւններ կառուցանել: Անգլիացիք դէմ կը կենան և թուրքերը չուզելով իրենց արդէն սկսած աշխատութիւնները դադարեցնել, Անգլիացիք ընդհարումէ մը ետքը ամրութիւնները կը քանդեն և երկիրը կը գրաւեն, հակառակ Բ. Գրան րոչոքներուն, որ կը յայտարարէր թէ ինք կարմիր ծովուն վրայ բազմաթիւ տեղեր գաղտնապէս Ռուսիոյ յանձնած էր:

Ճիտտէն կը գրեն թէ Հիճազի վալին բազմաթիւ հե-

տեւորդներով գաւառին մէջ պըտոյտ մը ըրած պահուն, արար աւազակախմբէ մը յարձակում կրեր է, թնդանօթ մը գրաւելով վալին հետեւորդներուն ձեռքէն:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Յառաջիկայ օգոս. 15ին Պալթիկի մէջ տեղի պիտի ունենան ռուս նաւատորմի զին փորձերը որոնց ներկայ պիտի գտնուի Չարնալ: Փորձերուն ցամաքային զինւորներն ալ պիտի մասնակցին թշնամին ցամաքէն մղելու աշխատելով:

Քրօնշտայտի մէջ, Ալէքսանտր Գ. զրահարոր, որ ռուսական նաւատորմի ղեկավարն է, ծով իջնելու ատեն, սոսկալի փոթորիկ մը պայթեր է, որ նաւուն զանազան մասերը աւեր է, և կայմն ալ փրցնելով ճիշդ Չարին և Չարուհին մօտիկը ձգեր է, որուն տակ երեք հոգի ճղմուեր և զինւորական դպրոցի աշակերտներ ծանրապէս վիրաւորուեր են:

Երկու ուրիշ զրահարորներ նոյն մեծութեամբ շինուելու վրայ են:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Տէյլի Մէյլ կը գրէ թէ Քրիւկէր կը պատրաստուի բողոքագիր մը ուղղել անգլ. կառավարութեան Ձեմպրէնի այն խօսքերուն դէմ, որով Պօէրները այն կտրուր կը դատէր, ուր պէտք է դասել աւազակները: Քրիւկէր բողոքագիր մը պիտի զրկէ նաև պետութեանց, Ձեմպրէնի վերջին սպանալիքներուն դէմ պօէրներուն հետ վայրագօրէն վարուելու մասին, հրաւիրելով զանոնք եթէ ոչ միջամտելու, գէթ Անգլիոյ քաղաքակրթութեան և մարդասիրութեան պայմանները յիշեցնելու: Եթէ այս բողոքներն ալ օգուտ չընեն, պօէրներն ալ խղճմտանքը մէկ կողմ պիտի դնեն և զանազան միջոցներ ձեռք պիտի առնեն Անգլիոյ մէկ քանի անակնկալ հարուածներ տալու համար:

Եօհանէսպուրկ քաղաքը կատարելապէս պաշարուած է. զինւորական իշխանութիւնները պօէրներու յարձակումէն կը վախնան և ամէն զգուշութիւն ձեռք կառնեն:

Քրիւկէր նախագահը թրանսվալ վերադառնալու գիտաւորութիւն չունենալով, սուտ է այն տարածայնութիւնը թէ Հոլանտական կառավարութիւնը Փորթուգալի կառավարութեան ինգրած է թոյլտուութիւն տալ Քրիւկէրի Լօրէնձօ Մարքէզէն անցնելու:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Յրահսական զինուորները Բէքիննէն ամբողջովին հեռացած են. միայն դեսպանատան պահակները կը մնան:

Լուր կայ թէ երկու պօքէր խմբեր, մին 5000 միւսը 8000 անձէ բաղկացած, որոնց մէջ կը գտնուի հազարի չափ արձակուած չին զօրքեր Բէքինի շուրջը հաւաքուեր են, և ռուսական զօրքերուն հեռացումն սպասելով քաղաքէն ներս մտնելու համար:

Պելճիական երկաթուղիի գործաւորները կը վախնան խոզովութիւններէ, երբ գիծերը պահպանող չինական զօրքերուն հետ առանձին կը մնան:

Չինաստանէն հասած թերթերը կը հաղորդեն թէ բազմաթիւ պօքսէրներ Շանհի-Քիւնի և շրջակայքուն մէջ կարեւոր աւերումներ գործեր են տուները այրեր են, և առւերուն վրայ յարձակեր են, Ամբողջ ժողովուրդը թշուառութեան մատնուած է թունկ Ծու Սիանկ ալ մեծ յաղմուութեամբ Շան-Սիի մէջ կը յառաջանայ, և տեղւոյն կասաւարիչը օտար զօրքեր օգնութեան կանչեր է:

Քիւնկ իշխանը պաշտօնական թերթ մը հիմնելու կարեւորութիւնը զգալով, դեսպաններու շնորհիւ տեղեկացած է օտար ազգերու մէջ ընդունուած մամուլի օրէնքներուն և որոշած է կանոնք ընդունիլ Չինաստանի համար: Հրատարակուած թերթերը ամէն ճնշումներէ զերծ՝ նպատակ պիտի ունենան կայսրութեան մէջ գտնուած ժողովուրդը լուսաւորելու:

Ա Ձ Դ

Տեղւոյս Պ. Լուսաւորչեան երկսեռ վարժարանին համար ուսուցչի մը պէտքը զգալի ըլլալով որ միանգամայն կարող ըլլայ եկեղեցական արարողութիւնները կատարել, այդ պաշտօնին փափազող անձերէն կը խնդրուի ուղղակի հոգաբարձութեան գիմել: Ամսականը զոհացուցիչ:

Նաեւ տեղւոյս ազգական շ. րժարանին համար վարժուհիի մը պէտք կայ, որ կարող ըլլայ երկրորդական դասեր սուսնողի և հմուտ՝ ձեռագործի:

Ի գիմաց Իսլիմիաի հողբարձ. Մ. Սուրյուկեան

Ա Ձ Դ

Կը ծախուի 1896ին փրար. 2ին իշխան Պորթի մկրտութեան առթիւ սպուած գործածուած նամակաղբօյններ 1-5-15-25 սանդիւմ:

Դիմել՝ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏՅԱՆ Վառնա

ОТГОВОРНИКЪ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна